

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մայիսի 2003 թվականի N 750-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկի և հողի հարկի եկամուտների հաշվառման ու վճարումների կազմակերպման աշխատանքները կանոնակարգելու նպատակով և հիմք ընդունելով Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, 14-րդ հոդվածի, 15-րդ հոդվածի «բ» կետի, 17-րդ հոդվածի, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ու 3-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 34-րդ հոդվածի 2-րդ մասի, 67-րդ հոդվածի, 84-րդ հոդվածի 2-րդ մասի, Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54-րդ, 73-րդ, 80-րդ, 86-րդ, 91-րդ և 93-րդ հոդվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

(Նախարարնր լրաց. 19.04.07 N 485-Ն, 23.07.09 N 827-Ն)

1. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկի և հողի հարկի եկամուտների հաշվառման ու վճարումների ընդունման կազմակերպման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) գույքահարկի և հողի հարկի գծով հարկային մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև տեղեկությունների փոխանակման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

գ) ֆիզիկական անձանց գույքահարկի և հողի հարկի ծանուցագրերի ու անդորրագրերի տպագրության, հատկացման, հաշվառման և պահպանման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատել ֆիզիկական անձանց գույքահարկի և հողի հարկի ծանուցագրերի ու անդորրագրերի ձևերը:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ապահովել ֆիզիկական անձանց գույքահարկի և հողի հարկի անդորրագրերի՝ որպես խիստ հաշվառման փաստաթղթերի, ինչպես նաև ծանուցագրերի տպագրությունն ու հատկացումը Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին (Երևանի քաղաքապետարանին):

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մայիսի 6-ի «Գույքահարկի գծով բյուջետային եկամուտների մուտքերն ապահովելու կարգի մասին» N 271 որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2003 թ. հունիսի 23
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2003 թվականի
մայիսի 29-ի N 750-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՈՒ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից համայնքների վարչական տարածքներում գտնվող հողամասերի հողի հարկի և գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինությունների, ինչպես նաև սեփականության իրավունքով ֆիզիկական անձանց պատկանող փոխադրամիջոցների գույքահարկի (այսուհետ՝ գույքային հարկեր) գծով

եկամուտների հաշվառման, վճարումների ընդունման (այդ թվում՝ ժամկետանց հարկային պարտավորությունների հավաքագրման) կազմակերպումը:

2. Գույքային հարկերի վճարումներն ընդունվում են սահմանված կարգով հարկային տեսչություններից հարկ վճարողների, նրանց հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների մասին ստացված տեղեկությունների հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով գույքահարկի հաշվարկման հայտերը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հետ համաձայնեցրած և գույքահարկի ինքնուրույն հաշվարկ իրականացնող (Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ֆիզիկական անձանց գույքային հարկերի հաշվարկներն ինքնուրույն ավտոմատացնող, ինչպես նաև ֆիզիկական անձանց գույքային հարկերի հաշվարկներն ավտոմատացնելու նպատակով համատեղ կամավոր միջհամայնքային կառույց ստեղծած) տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական անձանց գույքահարկի վճարումներն ընդունում են սահմանված կարգով անշարժ գույքի կադաստր վարող մարմնից՝ շինությունների, ինչպես նաև փոխադրամիջոցների հաշվառում (գրանցում) վարող համապատասխան լիազոր մարմիններից փոխադրամիջոցների մասին ստացված տեղեկությունների հիման վրա:

Հիմք ընդունելով սույն կետում նշված տեղեկությունները՝ գույքահարկի ինքնուրույն հաշվարկ իրականացնող տեղական ինքնակառավարման մարմիններն օրենքով սահմանված կարգով հաշվարկում են ֆիզիկական անձանց շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկի գումարները:

(3-րդ կետը լրաց. 19.04.07 N 485-Ն)

3¹. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով հողի հարկի հաշվարկման հայտերը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հետ համաձայնեցրած և հողի հարկի ինքնուրույն հաշվարկ իրականացնող (Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով գույքային հարկերի հաշվարկներն ինքնուրույն ավտոմատացնող, ինչպես նաև ֆիզիկական անձանց գույքային հարկերի հաշվարկներն ավտոմատացնելու նպատակով համատեղ կամավոր միջհամայնքային կառույց ստեղծած) տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական անձանց հողի հարկի վճարումներն ընդունում են սահմանված կարգով անշարժ գույքի կադաստր վարող մարմնից՝ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողամասերի մասին ստացված տեղեկությունների հիման վրա:

Հիմք ընդունելով սույն կետում նշված տեղեկությունները՝ հողի հարկի ինքնուրույն հաշվարկ իրականացնող տեղական ինքնակառավարման մարմիններն օրենքով սահմանված կարգով հաշվարկում են ֆիզիկական անձանց հողամասերի հողի հարկի գումարները:

(3¹ կետը լրաց. 19.04.07 N 485-Ն)

4. Տեղական ինքնակառավարման մարմնի (Երևանի վարչական շրջանի) ղեկավարը կազմակերպում է գույքային հարկերի վճարումների ընդունումը, իսկ տեղական ինքնակառավարման մարմնի (Երևանի վարչական շրջանի աշխատակազմի) համապատասխան ստորաբաժանման ղեկավարը (այսուհետ՝ համակարգող) իր աշխատողների (այսուհետ՝ վճարումներ ընդունողներ) միջոցով ապահովում է գույքային հարկերի մուտքագրումը համայնքի բյուջե:

(4-րդ կետը լրաց. 23.07.09 N 827-Ն)

5. Սույն կարգի 2-րդ կետում նշված տեղեկությունների, իսկ սույն կարգի 3-րդ և 3¹-րդ կետերում նշված դեպքում՝ ֆիզիկական անձանց գույքահարկի և հողի հարկի ինքնուրույն հաշվարկների հիման վրա տեղական ինքնակառավարման մարմինները (Երևան քաղաքում՝ նաև Երևանի վարչական շրջանները)՝

ա) մինչև օրենքով սահմանված գնահատման (վերագնահատման) տարվա դեկտեմբերի 1-ը՝ գույքահարկ վճարող ֆիզիկական անձանց ներկայացնում են շինությունների գույքահարկի ծանուցագրեր:

բ) մինչև օրենքով սահմանված գնահատման (վերագնահատման) տարվա սեպտեմբերի 1-ը, իսկ գնահատման (վերագնահատման) տարվա հուլիսի 1-ից հետո՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության իրավունքով ձեռք բերված հողամասերի, ինչպես նաև գնահատման (վերագնահատման) տարվա հուլիսի 1-ի դրությամբ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնում առկա հաշվառման տվյալների համեմատությամբ մինչև հողամասերի առաջիկա գնահատման (վերագնահատման) տարին ներառյալ ընկած ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նպատակային կամ գործառական (հողատեսքերի) նշանակության փոփոխություններ կրած հողամասերի համար՝ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնից հողամասի գնահատության մասին տեղեկություններն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում՝ հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց ներկայացնում (այդ թվում՝ փոստով ուղարկում կամ առձեռն հանձնում) են հողի հարկի վճարման ծանուցագրեր:

Գույքային հարկերի պարտավորությունների մասին տեղեկանք կամ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև ծանուցագրերում ներկայացված գույքային հարկերի հաշվարկի ճշգրտման նպատակով ֆիզիկական անձինք կարող են դիմել օրենքով սահմանված հաշվառող մարմիններ (Երևան քաղաքում՝ նաև Երևանի համապատասխան վարչական շրջան), իսկ հարկվող օբյեկտի կամ դրա տվյալների ճշգրտման նպատակով անհրաժեշտ տեղեկություններն ու տվյալներն օրենքով սահմանված կարգով կարող են ստանալ գույքային հարկերի հաշվարկման համար տեղեկություններ տրամադրող լիազոր մարմիններից:

(5-րդ կետը խմբ. 19.04.07 N 485-Ն, լրաց. 23.07.09 N 827-Ն)

6. Տեղական ինքնակառավարման մարմնի (Երևանի համապատասխան վարչական շրջանի) ղեկավարը սույն կարգի 4-րդ կետում նշված ստորաբաժանման կամ համապատասխան աշխատողի բացակայության դեպքում ծանուցագրերի տրամադրումն ու գույքային հարկերի վճարումների ընդունումն ապահովելու համար ընդունում է որոշում ծանուցագրեր տրամադրողների և (կամ) վճարումներ ընդունողների մասին (վճարումներ ընդունողներ): Նշված որոշմամբ սահմանվում է նաև այն պատասխանատու պաշտոնատար անձը (համակարգող), որը համակարգում է վճարումներ ընդունողների աշխատանքը:

(6-րդ կետը լրաց. 23.07.09 N 827-Ն)

7. Վճարումներ ընդունողներից յուրաքանչյուրին տրվում է տեղական ինքնակառավարման մարմնի (Երևանի վարչական շրջանի) ղեկավարի կողմից հաստատված, կնքված և տվյալ անձի լուսանկարով համապատասխան փաստաթուղթ (վկայական):

(7-րդ կետը լրաց. 23.07.09 N 827-Ն)

8. Համայնքի բյուջե գույքային հարկերի մուտքագրումն իրականացվում է՝

ա) վճարումների կանխիկ ընդունման միջոցով (միայն ֆիզիկական անձանցից).

բ) բանկային կամ փոստային համակարգերի միջոցով:

9. Գույքային հարկերի վճարումները կանխիկ ընդունվում են վճարումների ընդունման անդորրագրով (այսուհետ՝ անդորրագիր): Անդորրագիրը լրացվում է գրիչով և ընթերցելի: Անդորրագրում պարտադիր լրացվում են դրանում նշված բոլոր վավերապայմանները:

Վճարումներ ընդունողը՝

ա) վճարողից ստանալով գումարը՝ լրացնում է անդորրագիրը՝ 2 օրինակից, և գույքային հարկերի կանխիկ վճարումների ընդունման ամփոփագիրը (այսուհետ՝ ամփոփագիր)՝ սույն կարգի հավելվածով սահմանված ձևին համապատասխան, ու վճարողին է հանձնում անդորրագրի առաջին օրինակը՝ իր մոտ պահելով անդորրագրի երկրորդ օրինակը՝ որպես վճարումը հավաստող փաստաթուղթ.

բ) օրվա ընթացքում կանխիկ ընդունված գումարները, անդորրագրերի երկրորդ օրինակները, ինչպես նաև 2 օրինակից կազմված ամփոփագիրը հանձնում է համակարգողին ոչ ուշ, քան այդ օրվան հաջորդող օրը.

գ) համակարգողի կողմից ամփոփագրում կատարվում է կանխիկ ընդունված գումարների և անդորրագրերի երկրորդ օրինակների հանձնման ու ընդունման մասին համապատասխան գրառում, որից հետո համակարգողը ստորագրված ամփոփագրի առաջին օրինակը պահում է իր մոտ, իսկ երկրորդ օրինակը հանձնում է վճարումներ ընդունողին՝ որպես կանխիկ ընդունված գումարների և անդորրագրերի երկրորդ օրինակների հանձնումը հավաստող փաստաթուղթ:

10. Համակարգողը, անդորրագրերին համապատասխան կանխիկ ընդունված գումարներն առանձնացնելով ըստ հարկատեսակների, դրանք բանկի կանխիկ մուտքի անդորրագրերով (պարտադիր նշելով համայնքի անվանումը)՝ սահմանված կարգով մուտքագրում է տվյալ համայնքն սպասարկող տեղական զանձապետական բաժանմունքի (ՏԳԲ) համապատասխան զանձապետական հաշվին՝

ա) քաղաքներում՝ վճարումներ ընդունողից գումարի ստացման օրվան հաջորդող օրը.

բ) գյուղական համայնքներում (մուտքերն ընդունող բանկից համայնքի հեռավորությունից կախված) վճարումներ ընդունողից գումարի ստացման օրվան հաջորդող՝

մինչև 5 կմ հեռավորության դեպքում՝

2 օրվա ընթացքում,

5-15 կմ հեռավորության դեպքում՝

3 օրվա ընթացքում,

16 կմ և ավելի հեռավորության դեպքում՝

5 օրվա ընթացքում:

11. Արգելվում է կանխիկ ընդունված գումարները մուտքագրել տեղական ինքնակառավարման մարմնի (Երևանի վարչական շրջանի) դրամարկղ:

(11-րդ կետը լրաց. 23.07.09 N 827-Ն)

12. Փոստային համակարգի միջոցով ֆիզիկական անձանցից գույքային հարկերի վճարումներն ընդունվում են տեղական ինքնակառավարման մարմնի և փոստային համապատասխան իրավասու կազմակերպության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ հաշվի առնելով սույն կարգով սահմանված պահանջները:

13. Գույքային հարկերի հաշվարկված գումարները ֆիզիկական անձանց կողմից սահմանված ժամկետներից ուշ վճարվելու դեպքում, գումարները կանխիկ ընդունելիս, օրենքով սահմանված կարգով և չափով հաշվարկվում ու գանձվում է նաև մինչև վճարումների կատարման օրը վճարման ենթակա տույժերի գումարը:

14. Տեղական ինքնակառավարման մարմինը յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 5-ը անդորրագրերի երկրորդ օրինակները և գույքային հարկերի վճարումների մասին տեղեկությունները (կազմված 2 օրինակից) սահմանված կարգով ներկայացնում է իր տարածքն սպասարկող հարկային տեսչություն (տեսչություններ):

Սույն կարգի 3-րդ և 3¹-րդ կետերում նշված ֆիզիկական անձանց գույքահարկի և հողի հարկի ինքնուրույն հաշվարկ իրականացնող տեղական ինքնակառավարման մարմինները սույն կետում նշված տեղեկությունները հողի հարկի ինքնուրույն հաշվարկն սկսելու ամսվան հաջորդող ամսվանից հետո հարկային տեսչություն (տեսչություններ) չեն ներկայացնում:

(14-րդ կետը խմբ. 19.04.07 N 485-Ն)

15. Տեղական ինքնակառավարման մարմինները (Երևան քաղաքում՝ նաև Երևանի վարչական շրջանները) փոխադրամիջոցների համար գույքահարկ վճարող ֆիզիկական անձին տրամադրում են փոխադրամիջոցների տեխնիկական գննություն իրականացնող մարմիններ ներկայացվող փոխադրամիջոցների գծով հարկային պարտավորություններ չունենալու մասին տեղեկանքը:

(15-րդ կետը խմբ. 23.07.09 N 827-Ն)

16. Սույն կարգի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

17. Սույն կարգի պահանջները խախտելու համար պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման
մարմինների կողմից
գույքահարկի և հողի հարկի գծով եկամուտների հաշվառման ու
վճարումների ընդունման
կազմակերպման կարգի

Ձև

Ա Ս Փ Ո Փ Ա Գ Ի Ր

ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐԻ ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ

(մարզի անվանումը)			(համայնքի (Երևանի վարչական շրջանի) անվանումը)					
NN ը/կ	Անունը, ազգանունը	Հասցեն	Անդորրագրի՝		Վճարման ամսաթիվը	Գումարը	Հարկատեսակը	Հարկ վճարողի ստորագրությունը
			սերիան	համարը				

Վճարումներ ընդունող _____ (անունը, ազգանունը) _____ (ստորագրությունը)

_____ 200 թ.

Գումարը՝ ընդամենը _____ (թվերով) _____ (տառերով)

դրամ, և սույն ամփոփագրում նշված անդորրագրերի կրկնօրինակներն ստացա:

Համակարգող _____ (անունը, ազգանունը) _____ (ստորագրությունը)

_____ 200 թ.

(Ձևը փոփ. 23.07.09 N 827-Ն)

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2003 թվականի
մայիսի 29-ի N 750-Ն որոշման

Կ Ա Ր Գ

**ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ**

1. Սույն կարգով կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գույքահարկի և հողի հարկի պարտավորությունների հաշվարկման ու վճարումների հաշվառման նպատակով հարկային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև տեղեկությունների փոխանակման ընթացակարգը:

2. Յուրաքանչյուր տարվա ընթացքում հարկ վճարողների, նրանց գույքի ու հարկային պարտավորությունների մասին տեղեկությունները (ընթացիկ և (կամ) նախորդ 3 տարվա համար) յուրաքանչյուր տեղական ինքնակառավարման մարմնի տարածքն սպասարկող հարկային տեսչության կողմից եռամսյակը մեկ անգամ սույն կարգի NN 1-4 հավելվածներով սահմանված ձևերով տրամադրվում են համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնին՝ վերջինիս կողմից հարկային տեսչություն ներկայացված գրավոր հայտի հիման վրա, որտեղ պարտադիր նշվում են տեղեկությունների անվանումները (ըստ հավելվածների) և ժամանակահատվածը (սկիզբն ու ավարտը՝ օր, ամիս, տարի): Հարկային տեսչության կողմից տեղեկությունները տրամադրվում են հայտն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում՝ հարկ վճարողների հաշվառման առկա տվյալների հիման վրա:

Անհրաժեշտության դեպքում հարկային տեսչությունը տեղեկությունները (սույն կարգի NN 1-4 հավելվածներով սահմանված ձևերով) տրամադրում է նաև մագնիսական կրիչներով, ինչի մասին տեղական ինքնակառավարման մարմնի կողմից պարտադիր նշվում է հարկային տեսչություն ներկայացված գրավոր հայտում:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով գույքահարկի հաշվարկման հայտերը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հետ համաձայնեցրած և ֆիզիկական անձանց գույքահարկի ինքնուրույն հաշվարկ իրականացնող ու գույքահարկ վճարող կազմակերպություններին օրենքով սահմանված դեպքում հաշվառող մարմին հանդիսացող տեղական ինքնակառավարման մարմիններին սույն կարգի N 1 հավելվածով սահմանված ձևով տեղեկությունները ֆիզիկական անձանց գույքահարկի ինքնուրույն հաշվարկն իրականացնելու եռամսյակից, իսկ N 3 հավելվածով սահմանված ձևով տեղեկությունները կազմակերպություններին հաշվառող մարմին հանդիսանալու տարվանից հետո տեղեկությունները չեն տրամադրվում:

Օրենքով սահմանված կարգով ստուգումների իրականացման նպատակով հարկ վճարողների և նրանց գույքահարկի պարտավորությունների մասին սույն կարգի N 6 հավելվածով սահմանված ձևով տեղեկությունները գույքահարկ վճարողներին հաշվառող տեղական ինքնակառավարման մարմինը տրամադրում է հարկային մարմնին՝ վերջինիս կողմից տեղական ինքնակառավարման մարմին ներկայացված գրավոր հայտի հիման վրա, որում պարտադիր նշվում են հարկ վճարողների վավերապայմանները և տեղեկություններն ընդգրկող ժամանակահատվածը (սկիզբն ու ավարտը): Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տեղեկությունները տրամադրվում են հայտն ստանալուց հետո եռօրյա ժամկետում՝ գույքահարկ վճարողների հաշվառման առկա տվյալների հիման վրա: Հարկ վճարողների մոտ իրականացված ստուգումների արդյունքում գույքահարկի գծով լրացուցիչ հարկային պարտավորությունների արձանագրման դեպքում համապատասխան տեղեկատվությունը ստուգման ակտը կազմելուց հետո 10-օրյա ժամկետում տրամադրվում է գույքահարկ վճարողներին հաշվառող (ըստ շինության գտնվելու վայրի, իսկ փոխադրամիջոցի մասով՝ հարկ վճարողի գտնվելու վայրի) համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններին, որոնք սահմանված կարգով տեղեկությունները գրանցում են իրենց կողմից վարվող անձնական հաշվի քարտերում:

(3-րդ կետը լրաց., փոփ. 22.12.05 N 2240-Ն)

3¹. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով հողի հարկի հաշվարկման հայտերը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության հետ համաձայնեցրած և ֆիզիկական անձանց հողի հարկի ինքնուրույն հաշվարկ իրականացնող (Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ֆիզիկական անձանց գույքային հարկերի հաշվարկներն ինքնուրույն ավտոմատացնող, ինչպես նաև ֆիզիկական անձանց գույքային հարկերի հաշվարկներն ավտոմատացնելու նպատակով համատեղ կամավոր միջհամայնքային կառույց ստեղծած) ու հողի հարկ վճարող կազմակերպություններին օրենքով սահմանված դեպքում հաշվառող մարմին հանդիսացող տեղական ինքնակառավարման մարմիններին սույն կարգի N 2 հավելվածով սահմանված ձևով տեղեկությունները ֆիզիկական անձանց հողի հարկի ինքնուրույն հաշվարկն իրականացնելու եռամսյակից, իսկ N 4 հավելվածով սահմանված ձևով տեղեկությունները կազմակերպություններին հաշվառող մարմին հանդիսանալու տարվանից հետո չեն տրամադրվում:

Օրենքով սահմանված կարգով ստուգումների իրականացման նպատակով հարկ վճարողների և նրանց հողի հարկի պարտավորությունների մասին սույն կարգի N 7 հավելվածով սահմանված ձևով տեղեկությունները հողի հարկ վճարողներին հաշվառող տեղական ինքնակառավարման մարմինը տրամադրում է հարկային մարմնին՝ վերջինիս կողմից տեղական ինքնակառավարման մարմին ներկայացված գրավոր հայտի հիման վրա, որում պարտադիր նշվում են հարկ վճարողների վավերապայմանները և տեղեկություններն ընդգրկող ժամանակահատվածը (սկիզբն ու ավարտը): Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տեղեկությունները տրամադրվում են հայտն ստանալուց հետո եռօրյա ժամկետում՝ հողի հարկ

Համայնքի ղեկավար

(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ. Տ. _____ 200__թ.

(Հավելվածը լրաց. 02.12.04 N 1852-Ն)

Հավելված N 6
գույքահարկի և հողի հարկի գծով հարկային մարմինների ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև տեղեկությունների փոխանակման կարգի

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն
Ե Ր

Հայաստանի Հանրապետության
(մարզի (Երևան քաղաքի) անվանումը)
համայնք
ում
(համայնքի անվանումը)
հաշվառված գույքահարկ վճարող
կազմակերպության հարկվող
օբյեկտների և գույքահարկի մասին

Table with 2 main columns: 'Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)' and 'Տեղեկությունների համար պահանջվող ժամանակահատվածը'. Includes dates like '20...թ-ից' and '20...թ. դրությամբ'.

(հազար դրամ)

Main table with 16 columns: 1. Օրենքով սահմանված հարկվող օբյեկտ համարվող շինություններն ու փոխադրամիջոցների մաստ տեսակների, 2. Շինությունների գտնվելու վայրի հասցեները, փոխադրամիջոցների մակնիշը և պետական համարանիշը, 3. Շինությունների համապատասխան կադաստրային արժեքները, 4. Փոխադրամիջոցների քարշող շարժիչների համապատասխան հզորությունները (ծիաուժ կամ կիլովատտ), 5. Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների նստատեղերի թիվը, 6. Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի թողարկման և տարեթիվը, 7. Պետական գրանցման կամ հաշվառման տվյալներով սեփականության իրավունքը ծագելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, 8. Պետական գրանցման կամ հաշվառման տվյալներով սեփականության իրավունքը դադարելու ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, 9. Հաշվարկված հարկի ընդհանուր գումարը, 10. Կատարված վճարումների ընդհանուր գումարը, 11. Այլառք, 12. Տուգանքների գումար, 13. Տույժերի գումար, 14. Հարկային պարտավորությունների չվճարած մնացորդը, 15. Գույքահարկի գերավճարի մնացորդը, 16. Գույքահարկի մնացորդը.

- Մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար 7-րդ սյունակում լրացվում է 1 թիվը, մոտոցիկլետների համար՝ 2 թիվը, 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար՝ 3 թիվը, իսկ բեռնատար ավտոմեքենաների համար՝ 4 թիվը:

- Երևան քաղաքի վարչական շրջանները տեղեկությունների «համայնքի անվանումը» դաշտում լրացնում են վարչական շրջանի անվանումը:

Կատարող «.....» 20
.....
(պաշտոնը) (անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Համայնքի ղեկավար
.....
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ.Տ.
(Հավելվածը լրաց. 22.12.05 N 2240-Ն, 23.07.09 N 827-Ն)

Հավելված N 7
Գույքահարկի և հողի հարկի գծով
հարկային մարմինների ու տեղական
ինքնակառավարման մարմինների միջև
տեղեկությունների փոխանակման կարգի

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
Հայաստանի Հանրապետության

(մարզի (Երևան քաղաքի) անվանումը)

_____ համայնքում
(համայնքի անվանումը)

հաշվառված հողի հարկ վճարող
կազմակերպության հարկվող օբյեկտների և հողի
հարկի մասին

Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	
Կազմակերպության անվանումը	
Կազմակերպության գտնվելու վայրը	
Տեղեկությունների համար պահանջվող ժամանակահատվածը	__ __ 20__ թ.-ից __ __ 20__ թ. __ __ 20__ թ. դրությամբ

(հազ. դրամ)

Հարկվող օբյեկտ համարվող հողի մասին լիազոր մարմնի ներկայացրած տեղեկությունների տվյալներով						Հողի հարկ վճարողի ներկայացրած հաշվարկների, կատարված վճարումների և համայնքի հաշվառման տվյալներով								
N ը/կ	օբյեկտի սահման ված հարկվող օբյեկտ համար- վող հողա- մասերն ու դրանց չափերը (հա)	հողա- մասերի գտնվելու վայրերը	հողամասերի համապատասխան կադաստրային արժեքները կամ կա- դաստրային գուտ եկամուտները՝ հողի հարկի հաշվարկման համար հիմք հանդիսացող նախորդ և ընթացիկ գնահատման տարիների տվյալներով		հողամասի նպատա- կային նշանա- կությունը և գործա- ռական նշանա- կությունը(հող ա- տեսքը)	պետա- կան գրանց- ման տվյալ- ներով սեփակ ա- նություն կամ օգտա- գործմա ն իրա- վունքը ժազելու ամսա- թիվը, ամիսը, տարե- թիվը	պետա- կան գրանց- ման տվյալ- ներով սեփակ ա- նության կամ օգտա- գործմա ն իրա- վունքը դադա- րելու ամսա- թիվը, ամիսը, տարե- թիվը	պետա- կան գրանց- ման տվյալ- ներով սեփակ ա- նության կամ օգտա- գործմա ն նշանա- կություն(հող ա- տեսքի)իվի ո-խության ամսա-թիվը, ամիսը, տարե- թիվը	հաշ- վարկվա ծ հարկի ընդհա- նուր գու- մարը	կատար ված վճա- րումնե րի ընդհա- նուր գու- մարը	հարկային պարտավորությունների չվճարված մնացորդը			հողի հարկի գերավճարի մնացորդը __ __ 20__ թ. դրությամբ
			նախորդ	ընթացիկ							20__ թ. դրությամբ	ապառք ը	տուգանքնե րի գումարը	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15

- Երևան քաղաքի վարչական շրջանները տեղեկությունների «համայնքի անվանումը» դաշտում լրացնում են վարչական շրջանի անվանումը:

Կատարող _____ (պաշտոնը) _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը) __ __ 20__ թ.
Համայնքի ղեկավար _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

Կ.Տ.

(Հավելվածը լրաց. 19.04.07 N 485-Ն, լրաց. 23.07.09 N 827-Ն)

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2003 թվականի
մայիսի 29-ի N 750-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐԻ ՈՒ ԱՆՂՈՐՐԱԳՐԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ, ՀԱՏԿԱՑՄԱՆ, ՀԱՇՎԱՈՒՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է ֆիզիկական անձանց գույքահարկի և հողի հարկի (այսուհետ՝ գույքային հարկեր) ծանուցագրերի և վճարումների ընդունման անդորրագրերի (այսուհետ՝ անդորրագրեր) տպագրության, հատկացման, հաշվառման և պահպանման աշխատանքների կազմակերպումը:

2. Ծանուցագրի և անդորրագրի ձևը հաստատվում է հարկային մարմնի ղեկավարի հրամանով:
(2-րդ կետը փոփ. 23.07.09 N 827-Ն)

3. Ծանուցագրերի և անդորրագրերի տպագրությունը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը: Անդորրագրերը համարվում են խիստ հաշվառման փաստաթղթեր:

Ծանուցագրերը տպագրվում են առանց համարների, իսկ անդորրագրերը՝ համարներով ու տառային սերիաներով, և կազմվում են գրքույկներ՝ յուրաքանչյուրում 50 անդորրագիր (առաջին և երկրորդ օրինակներով, աջ և ձախ կողմերով):

4. Ծանուցագրերի և անդորրագրերի տպագրությունը կազմակերպելու համար համապատասխան մարզպետը (Երևանի քաղաքապետը) տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների (Երևանի վարչական շրջանի ղեկավարի) կողմից ստացված հայտ-պահանջագրերը՝ համաձայն N 1 հավելվածի, ամփոփելով, մինչև հաշվետու տարվա մարտի 1-ը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում ընդհանուր հայտ-պահանջագիր (N 1 հավելված):

(4-րդ կետը լրաց., փոփ. 23.07.09 N 827-Ն)

5. Տեղական ինքնակառավարման մարմինները (Երևանի վարչական շրջանների ղեկավարները), մարզպետարանները և Երևանի քաղաքապետարանը հայտ-պահանջագրերը կազմում են յուրաքանչյուր տարվա համար՝ ելնելով նախորդ տարվա օգտագործված ծանուցագրերի և անդորրագրերի փաստացի քանակից, դրանց տարեսկզբի ու տարեվերջի մնացորդներից և ակնկալվող քանակներից: Հայտ-պահանջագրերը կազմվում են 2 օրինակից, որոնց կից ներկայացվում է նաև հաշվետվություն՝ համաձայն N 2 հավելվածի, նախորդ տարում ստացված և օգտագործված անդորրագրերի մասին:

(5-րդ կետը փոփ. 23.07.09 N 827-Ն)

6. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը հայտ-պահանջագրերն ստանալուց հետո ստուգում է դրանց ճշտությունը, ամփոփում և մեկամսյա ժամկետում կատարում է պատվերը:

(6-րդ կետը փոփ. 23.07.09 N 827-Ն)

7. Տպարանի կողմից համապատասխան փաստաթղթերի (ապրանքատրանսպորտային բեռնագիր, հաշիվ-ապրանքագիր, պահեստի ելքի անդորրագիր և այլն) հիման վրա ստացված ծանուցագրերն ու անդորրագրերը մուտքագրվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում և, հայտ-պահանջագրերից ելնելով, հատկացվում են մարզպետարաններին (Երևանի քաղաքապետարանին):

(7-րդ կետը փոփ. 23.07.09 N 827-Ն)

8. Մարզպետարանները (Երևանի քաղաքապետարանը) ծանուցագրերը և անդորրագրերն ստանալիս՝ ստուգում են ծանուցագրերի քանակի ճշտությունը և անդորրագրերի գրքույկների փաթեթները: Եթե ստացվող փաստաթղթերի քանակությունը ճիշտ չէ (ավելցուկ կամ պակասորդ) կամ անդորրագրերի գրքույկների փաթեթներում հայտնաբերվում է խոտան, ապա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից ծանուցագրերի ու անդորրագրերի հատկացման համար պատասխանատու պաշտոնատար անձի և դրանց ստացման համար մարզպետի կամ Երևանի քաղաքապետի հրամանով նշանակված պատասխանատու անձի կողմից կազմվում է հայտնաբերված ընդհանուր թերությունների խոտանման ակտ (2 օրինակից)՝ համաձայն N 3 հավելվածի: Ընդհանուր թերությունների խոտանման ակտի մեկ օրինակը պահվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում:

(8-րդ կետը փոփ. 23.07.09 N 827-Ն)

9. Մարզպետարաններում (Երևանի քաղաքապետարանում) ստացված ծանուցագրերը և անդորրագրերը գրանցվում են հաշվառման գրքում՝ համաձայն N 4 հավելվածի: Անդորրագրերի գրքույկներում առանձին անդորրագրերի վրա խոտան հայտնաբերելիս՝ անդորրագրի առաջին և երկրորդ օրինակների վրա անկյունագծերի երկայնքով քաշվում են գծեր և պատասխանատու անձի ստորագրությամբ կատարվում է նշում՝ «խոտան»: Չի թույլատրվում անդորրագրերի տրամադրումը մեկ մարզպետարանից մյուսին կամ Երևանի քաղաքապետարանին և հակառակը:

10. Մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) կողմից ծանուցագրերը և անդորրագրերի գրքույկները տեղական ինքնակառավարման մարմիններին (Երևանի վարչական շրջաններին) հատկացվում են դրանց ղեկավարների կողմից նախապես ներկայացված հայտ-պահանջագրերի հիման վրա: Ծանուցագրերը և անդորրագրերի գրքույկներն ստանում են տեղական ինքնակառավարման մարմինների (Երևանի վարչական շրջանների) ղեկավարների կողմից լիազորված անձինք:

(10-րդ կետը լրաց. 23.07.09 N 827-Ն)

11. Ծանուցագրերը և անդորրագրերն ստանալուց հետո ենթակա են գրանցման տեղական ինքնակառավարման մարմնում (Երևանի վարչական շրջաններում), վարվող հաշվառման գրքում (N 4 հավելված): Ծանուցագրերի և անդորրագրերի շարժի վերաբերյալ գրանցումները հաշվառման գրքում կատարվում են անմիջապես՝ ծանուցագրերն ու անդորրագրերն ստացվելու կամ հատկացվելու օրը:

Տեղական ինքնակառավարման մարմիններում (Երևանի վարչական շրջաններում) ծանուցագրերի և անդորրագրերի մուտքագրումը, գրանցումը և հատկացումը կատարվում է տեղական ինքնակառավարման

մարմնի (Երևանի վարչական շրջանի) ղեկավարի հրամանով նշանակված պատասխանատու պաշտոնատար անձի կողմից: Նշված պաշտոնատար անձինք չեն կարող միաժամանակ հանդիսանալ գույքային հարկերի վճարումները համակարգողներ:

(11-րդ կետը լրաց. 23.07.09 N 827-Ն)

12. Բոլոր հաշվառման գրքերում անդորրագրերի յուրաքանչյուր սերիայի (ըստ հերթական շարունակվող համարների) ստացման և հատկացման մասին յուրաքանչյուր գրանցում կատարվում է առանձին տողով: Ստացվելու կամ հատկացվելու մասին գրանցումները կատարվելուց հետո՝ օրվա վերջում դուրս է բերվում անդորրագրերի առկա մնացորդը:

Տեղական ինքնակառավարման մարմիններում (Երևանի վարչական շրջաններում) վճարումներ համակարգող՝

յուրաքանչյուր ամսվա արդյունքներով, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 5-ը վճարումներ ընդունողների հետ կազմում է երկկողմանի տեղեկանք ստացված, օգտագործված (խտանված) անդորրագրերի մասին,

յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով, մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը անդորրագրերի և ծանուցագրերի մուտքագրումը, գրանցումը և հատկացումն իրականացնող պատասխանատու անձի հետ կազմում է երկկողմանի ակտ՝ համայնքում համապատասխան ժամանակաշրջաններում ծանուցագրերի և անդորրագրերի քանակային շարժի (ստացված, օգտագործված, խտանված, մնացորդ) մասին:

Տեղական ինքնակառավարման մարմինները (Երևանի վարչական շրջանները) սույն կարգի 9-րդ կետին համապատասխան խտանված անդորրագրերը սույն կարգի 5-րդ կետով սահմանված հաշվետվության (N 2 հավելված) հետ միասին ներկայացնում են համապատասխան մարզպետարան (Երևանի քաղաքապետարան):

Համապատասխան մարզպետարանները (Երևանի քաղաքապետարանը) տեղական ինքնակառավարման մարմիններից (Երևանի վարչական շրջաններից) ստացված, ինչպես նաև սույն կարգի 9-րդ կետին համապատասխան իրենց կողմից հայտնաբերված խտանված անդորրագրերը սույն կարգի 5-րդ կետով սահմանված հաշվետվության (N 2 հավելված) հետ միասին ներկայացնում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն:

(12-րդ կետը լրաց. 23.07.09 N 827-Ն)

13. Տեղական ինքնակառավարման մարմիններում (Երևանի վարչական շրջաններում) վարվող հաշվառման գրքի էջերը համարակալվում, կարվում և կազմվում են, որից հետո ներկայացվում են մարզպետարան (Երևանի քաղաքապետարան) կնքման և համարակալման: Կնքված և համարակալված գրքերը հերթական համարներով հաշվառվում են մարզպետարանում (Երևանի քաղաքապետարանում): Ծանուցագրերի և անդորրագրերի հաշվառման գիրքը լրանալուց հետո տեղական ինքնակառավարման մարմնի (Երևանի վարչական շրջանի) կողմից նույն կարգով կազմվում է նոր գիրք: Լրացված գրքերը պահվում են տեղական ինքնակառավարման մարմնում (Երևանի վարչական շրջանում)՝ օրենքով սահմանված ժամկետով և կարգով:

(13-րդ կետը լրաց. 23.07.09 N 827-Ն)

14. Ծանուցագրերի և անդորրագրերի հատկացումն ու ստացումն ամրագրվում է համապատասխան անձանց ստորագրություններով:

15. Չի թույլատրվում տեղական ինքնակառավարման մարմինների (Երևանի վարչական շրջանների) կողմից անդորրագրերի փոխանակում կամ միմյանց տրամադրում:

(15-րդ կետը լրաց. 23.07.09 N 827-Ն)

16. Անդորրագրերը պահվում են չիրկիզվող, երկաթյա պահարաններում կամ առանձին այնպիսի տեղերում, որոնք կահավորված են անդորրագրերն անվնաս պահպանելու համար:

17. Մարզպետարաններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, Երևանի վարչական շրջաններում ծանուցագրերի և անդորրագրերի գույքագրումը կատարվում է ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ: Գույքագրման արդյունքներով, ինչպես նաև երկկողմանի տեղեկանքով կամ ակտով փաստացի շեղումներ (ավելցուկ, պակասորդ) հայտնաբերվելու դեպքում գրավոր հայտնվում է մարզպետին (Երևանի քաղաքապետին):

(17-րդ կետը փոփ. 23.07.09 N 827-Ն)

18. Սույն կարգի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն:

(18-րդ կետը փոփ. 23.07.09 N 827-Ն)

19. Սույն կարգի պահանջները խախտելու համար պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Ս. Թովուզյան

Հավելված N 1

Ֆիզիկական անձանց գույքահարկի և հողի հարկի
ծանուցագրերի ու անդորրագրերի տպագրության,
հատկացման, հաշվառման և պահպանման կարգի

Հ Ա Յ Տ - Պ Ա Հ Ա Ն Ջ Ա Գ Ի Ր

ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐԻ ԾԱՆՈՒՑԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՆՂՈՐՐԱԳՐԵՐԻ

Պահանջվող փաստաթղթի անվանումը (ծանուցագիր, անդորրագիր)	Մնացորդը՝ նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ	Ստացվել է նախորդ տարվա ընթացքում	Օգտագործվել է (այդ թվում խոտանվել է) նախորդ տարվա ընթացքում	Մնացորդը ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ	Ակնկալվող պահանջը հաշվետու տարում	Ծանոթագրություն

Ընդամենը պահանջվում է _____ ծանուցագիր: (տառերով)

Ընդամենը պահանջվում են _____ անդորրագրեր: (տառերով)

ՀՀ _____ մարզպետ (Երևանի քաղաքպետ) _____ (անունը, ազգանունը)

Հայաստանի Հանրապետության մարզի համայնքի ղեկավար _____ (անունը, ազգանունը)

Երևանի _____ վարչական շրջանի ղեկավար _____ (անունը, ազգանունը)

Կ. Տ. _____ 200__ թ.

(Հավելվածը լրաց. 23.07.09 N 827-Ն)

Հավելված N 2
Ֆիզիկական անձանց գույքահարկի և հողի հարկի ծանուցագրերի ու անդորրագրերի տպագրության, հատկացման, հաշվառման և պահպանման կարգի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐԻ 200__Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՆՂՈՐՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Մնացորդը՝ տարեսկզբին				Մուտքագրվել է տարվա ընթացքում				Հատկացվել է (այդ թվում՝ խոտանվել է) տարվա ընթացքում				Մնացորդը՝ տարեվերջին			
	անդորրագրերի թիվը		սերիան		անդորրագրերի թիվը		սերիան		անդորրագրերի թիվը		սերիան		անդորրագրերի թիվը		սերիան	
	սկզբի համարը	վերջին համարը	սկզբի համարը	վերջին համարը	սկզբի համարը	վերջին համարը	սկզբի համարը	վերջին համարը	սկզբի համարը	վերջին համարը	սկզբի համարը	վերջին համարը	սկզբի համարը	վերջին համարը		

Կից ներկայացվում են _____ խոտանված անդորրագրեր:

ՀՀ _____ մարզպետ (Երևանի քաղաքպետ) _____ (անունը, ազգանունը)

Հայաստանի Հանրապետության _____ մարզի _____ համայնքի ղեկավար _____

